



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (31)

Естественные и физико-математические науки
(География и геология, биология, математика и механика, физика и
радиофизика)

Natural and Physical-Mathematical Sciences
(Geography and Geology, Biology, Mathematics and Mechanics, Physics and
Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2020

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (31)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
(Աշխարհագրություն և երկրաբանություն, կենսաբանություն, մաթեմատիկա և
մեխանիկա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
կ.գ.թ., դոց. Լ. Փանոսյան
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասելյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան
ֆ.մ.գ.թ. Ս. Ալեքսանյան
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Варданян
д.ф.м.н., проф. Р. Алавердян
д.ф.м.н., доц. А. Балабекян
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов
д.ф.м.н., доц. Т. Акобян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. М. Григорян
к.б.н., доц. О. Паносян
к.т.н., доц. О. Ароян
к.ф.м.н., доц. С. Мхитарян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.ф.м.н., ассист. А. Манаселян
к.ф.м.н., ассист. А. Варданян
к.ф.м.н. М. Алексанян
к.ф.м.н. Т. Абрамян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. R. Alaverdyan
DSc, Associate Prof. A. Balabekyan
DSc, Associate Prof. Y. Mamasakhlisov
DSc, Associate Prof. T. Hakobyan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. L. Panosyan
PhD, Associate Prof. H. Haroyan
PhD, Associate Prof. S. Mkhitaryan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD, Assistant A. Manaselyan
PhD, Assistant A. Vardanyan
PhD M. Aleksanyan
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակչության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈԻԳԸ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները՝ մարդկանց հետաքրքրությունների շրջանակների ընդլայնումը, ազատ ժամանակի և եկամուտների առկայությունը, տրանսպորտային միջոցների և տեղեկատվական համակարգերի կատարելագործումը, ավելի են դյուրացնում այս կամ այն դեստինացիայի վերաբերյալ տեղեկատվության ստացման և մարդկանց ակտիվ տեղաշարժերի գործընթացները, դրանով իսկ խթան հանդիսանալով զբոսաշրջության հետագա զարգացման համար: Զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետությունում համարվում է տնտեսության գերակա ուղղություն՝ հնարավորություն ստեղծելով լուծելու մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ, ապահովել տնտեսական աճ և ինտեգրվել միջազգային զբոսաշրջության շուկային: ՀՀ-ում զբոսաշրջային ոլորտը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Քաղաքացիական օրենսգրքով», «Աշխատանքային օրենսգրքով» և այլ իրավական ակտերով [1]: Զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորումն իրականացնում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, ովկարող է մշակել և ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկություններ զբոսաշրջության զարգացման հեռանկարների և ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև իրականացնել ՀՀ-ում զբոսաշրջիկների ընդունման, սպասարկման, զբոսաշրջային ուղևորությունների կազմակերպման, տեղեկատվական, գովազդային և հրատարակչական գործունեություն [2]:

Հայաստան այցելած զբոսաշրջիկները հիացմունքով են խոսել երկրի պատմա-ճարտարապետական և բնական անզուգական հարստությունների մասին:

Ամերիկյան հանրահայտ նկարիչ Ռոքուել Քենտը գրել է. *«Եթե ինձ հարցնեին, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է ավելի շատ հրաշքների հանդիպել, ես ամենից առաջ կտայի Հայաստանի անունը: Ակամայից այդ փոքրիկ անկյունում կարելի է հանդիպել այնպիսի հուշարձանների և այնպիսի մարդկանց, որոնք կարող են դառնալ ամբողջ աշխարհի զարդն ու հպարտությունը: Երիցս կեցցե՛ս դու, հո՛ղ հայկական, տաղանդների՝ օրրան, հրաշագործների՝ օրրան»:*

Ըստ Հայաստանում Լիբանանի դեսպան Ջիբրալ Բութոս Ջաարի՝ *«Հայաստանը զբոսաշրջության համար գրավիչ և յուրահատուկ երկիր է, հատկապես իր անվտանգությամբ ու կայունությամբ»*(Jibrail Butros Jaar 2005):

Ըստ ավստրացի գրող, հումանիստ Ֆրանց Վերֆելի՝ «Հայաստանը քաղաքակրթության օրրանն է, Հին աշխարհի առաջատար և զարգացած պետություններից մեկը» (Franz Viktor Werfel 1933):

Աշխատանքում ուսումնասիրվել է ՀՀ զբոսաշրջային ռեսուրսները, դրանց առանձնահատկություններն ու օգտագործման ուղղությունները, առաջարկվել է այն անհրաժեշտ քայլերը, որոնք պետք է իրականացվեն պետության կողմից զբոսաշրջային գործունեության արդյունավետ կազմակերպման և հետագա զարգացման համար:

ՀՀ մարզերում կան զբոսաշրջության տարբեր ուղղությունների զագացման համար անհրաժեշտ նախադրյալներ՝ պայմանավորված բնական, պատմամշակութային, սոցիալ-տնտեսական ռեսուրսներով: Հայաստանն ունի յուրօրինակ մշակույթ՝ ճարտարապետություն, գրականություն, երգարվեստ, պարարվեստ: Գոյություն ունեն ավելի քան 24000 պատմամշակութային հուշարձաններ, որոնք հնարավորություն են տալիս զարգացնելու ճանաչողական զբոսաշրջությունը [1, 5]: Հայաստանին բնորոշ է նաև լանդշաֆտային բազմազանությունը: Հաշվի առնելով այս փաստը՝ ՀՀ-ում կարող ենք զարգացնել էկոզբոսաշրջությունը, արկածային զբոսաշրջությունը՝ ըստ սեզոնի: Օրինակ՝ ձմռանը Գեղամա լեռների ձյունապատ գագաթները նպաստավոր են ձմեռային հանգստի և դահուկային մարզաձևով զբաղվողների համար, իսկ ամռանը՝ բարձր լեռնային լանդշաֆտը հնարավորություն է տալիս կազմակերպել արշավներ, լեռնամագլցում, լեռնարշավներ և այլն: Հայաստանում գործում են պետական 3 արգելոցներ (Խոսրովի, Շիկահողի, Էրեբունի), 26 արգելավայրեր և ազգային 4 պարկ՝ Սևան, Արևիկ, Արփա, Դիլիջան [3]: Ընդ որում, բնական ռեսուրսների պահպանության և վերարտադրության համար անհրաժեշտ է սահմանել պետական վերահսկողություն, ինչպես նաև աշխատանքներ իրականացնել բնության հուշարձանների բացահայտման և նոր հատուկ պահպանվող տարածքների ստեղծման ուղղությամբ [4]:

Վայոց ձորի մարզի գեոմորֆոլոգիական պայմաններն ու բնակլիմայական պայմանների բազմազանությունը հնարավորություն են տալիս զարգացնելու սպորտային զբոսաշրջությունը: Օրինակ՝ ձմռանը կարելի է ստեղծել սպորտբազաներ, կարճատև հանգստի օբյեկտներ, և կազմակերպել դահուկային, սահնակային, ավիացիոն մրցումներ, իսկ ամռանը՝ հետիոտն զբոսանքներ, արշավներ անտառային արահետներով, լեռնագնացություն դեպի Գանձակ, ինչպես նաև կազմակերպել ջրային (գետային) սպորտաձևեր՝ մակույկներով և նավակներով լող՝ Արփա և Եղեգիս գետերում: Իսկ ջրամբարների կառուցումը, հնարավորություն կտա կազմակերպելու և՛ նավարկություն, և՛ ձկնորսություն: Մարզում կարելի է ձևավորել քարանձավային զբոսաշրջության մշակույթը. օրինակ՝ Մոզրովի քարանձավը Հայաստանի բնական հրաշքներից մեկն է, այն հարուստ է բազմապիսի երկրաբանական

կազմավորումներով, սակայն երկրաբանական ու կլիմայական ազդեցությամբ պայմանավորված՝ քարանձավի մուտքի հատվածը խիստ վթարավտանգ է դարձել: Դժբախտ պատահարները բացառելու և մուտքը փակելու փոխարեն, կարելի է որոշակի ներդրումներ կատարել, և վերականգնել քարանձավն ու դեպի քարանձավ տանող ճանապարհը: Վայոց ձորի կուրորտային կենտրոններից մեկը՝ Ջերմուկը, հայտնի է հանքային ջրերի որակական բարձր հատկանիշներով, սակայն վերջին ժամանակաշրջանում Ամուլսարում իրականացվող հանքաարդյունաբերական աշխատանքները կարող են հանգեցնել Ջերմուկի ջրերի՝ քիմիական նյութերով աղտոտմանը: Բացի այդ, լինելով զբոսաշրջային կարևոր դեստինացիա, Ջերմուկ քաղաքը այլ մարզերի հետ կապը հաստատում է միայն ավտոճանապարհով: Քաղաքի միջազգային հեղինակության բարձրացման և բնակչության ակտիվ տեղաշարժների ապահովման համար առաջնահերթ է պետական ներդրումների իրականացումը՝ Ջողից Վարդենիսի լեռնաշղթայի վրայով դեպի Ջերմուկ՝ երկաթուղի ստեղծելու և Ջերմուկի նախկին օդանավակայանը վերականգնելու համար: Քաղաքում զբոսաշրջության զարգացումը կարելի է ապահովել մի քանի ուղղություններով.

Քաղաքը վերածել միջազգային չափանիշներին համապատասխանող առողջարանային և ձմեռային զբոսաշրջության կենտրոնի:

Քաղաքում ստեղծել մանկապատանեկան և երիտասարդական ճամբարատեղիներ:

Կենտրոնը կարող է դառնալ ազգային և միջազգային մրցույթների կազմակերպման ու իրականացման վայր, որն էլ, իր հերթին, նպաստում է ոչ միայն արտագնա, այլ նաև ներքին զբոսաշրջային հոսքերի աճին:

Տաթև զբոսաշրջային կենտրոնը՝ իր բնակլիմայական պայմաններով, պատմամշակութային հարստությամբ ու ավանդույթներով, հեռանկարային դեր ունի Հայաստանի զբոսաշրջության զարգացման գործում: Տաթևում զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է Տաթև վանական համալիրի վերականգնումը, Տաթև վանական համալիրում նոր դպրատան ստեղծումը, մասնավորապես՝ Տաթև համալսարանի վերականգնումը, որը հնարավորություն կտա համայնքը վերածել գիտակրթական կենտրոնի, որտեղ իրենց գիտահետազոտական աշխատանքները կկարողանան կատարել ինչպես ՀՀ քաղաքացիները, այնպես էլ օտարերկրյա հետազոտողներն ու գիտնականները: Գիտակրթական կենտրոնի վերականգնումը կնպաստի Տաթևում զբոսաշրջության կրթական ուղղության ձևավորմանն ու զարգացմանը: Այս ամենին զուգահեռ անհրաժեշտ է զբոսաշրջային կենտրոնում ապահովել բարձրորակ ինտերնետային կապ և ստեղծել բանկային ծառայությունների համակարգ: Ներկայումս Տաթև զբոսաշրջային կենտրոնը արտաքին աշխարհի հետ կապվում է ավտոճանապարհով, այդ իսկ պատճառով կենտրոնի զարգացման և զբոսաշրջային գործունեության խթանման համար առաջնահերթ է դառնում

տրանսպորտային հասանելիությունը: Տաթևի միջազգային զբոսաշրջային հեղինակությանը և զբոսաշրջիկների դինամիկ տեղաշարժներին կարող է նպաստել Գորիս օդանավակայանի վերականգնումը, իսկ վանական համալիր մատչելի մուտք գործելու համար՝ Հալիձորի վրայով անցնող ճոպանուղու բարեկարգումը: Հաշվի առնելով վերջին ժամանակաշրջանում Տաթևում զբոսաշրջիկների մեծ հոսքը՝ առաջնային խնդիր է դառնում գիշերակացի օբյեկտների ստեղծումը, որոնք կունենան փորձառու անձնակազմ և կապահովեն սպասարկման բարձր մակարդակ: Զբոսաշրջիկների համար հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում տվյալ երկրի էթնիկ մշակույթը, որը կարելի է ներկայացնել հյուրատների արտաքին և ներքին ձևավորումների միջոցով, ինչպես նաև՝ կազմակերպել միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան ներկայացնելու հայ ժողովրդի կենցաղը, ծեսերն ու տոները, պարը և երաժշտությունը, արհեստները՝ գորգագործությունը, մանրանկարչությունը, խաչքարագործությունը և փայտագործ-ությունը, խոհանոցը:

Շիրակի մարզը, մասնավորապես՝ Գյումրի քաղաքը, միշտ էլ աչքի է ընկել յուրահատուկ կոլորիտով, պատմամշակութային ժառանգությամբ, հայտնի մարդկանցով, գեղեցիկ ու մաքուր բնությամբ, յուրահատուկ խոհանոցով: Մարզի հնարավորությունները և հեռանկարները զբոսաշրջության զարգացման համար ահռելի են: Մարզում ամենից տարածված զբոսաշրջության ճյուղը ճանաչողական զբոսաշրջությունն է, սակայն նախադրյալներ կան՝ զարգացնելու էկոլոգիական, գյուղական, արկածային, սպորտային, խոհանոցային զբոսաշրջությունը: Զբոսաշրջության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող շենքերի, թանգարանների (տուն-թանգարանների), մշակութային օջախների, արվեստանոցների և արհեստանոցների, քաղաքի և մարզի կոլորիտը կազմող բաղադրիչներին վերաբերվող ինֆորմացիայի ճիշտ ներկայացումը կդառնա զբոսաշրջության զարգացման կարևորագույն բաղադրիչ-ուղղություններից մեկը: «Կումայրի» արգելոցի առկայությունն ու դրա ամբողջական վերականգնումը կնպաստի քաղաքային զբոսաշրջության զարգացմանը, իսկ ավանդական ուտեստ-փառատոնների կազմակերպումը՝ կխթանի խոհանոցային զբոսաշրջության զարգացմանը: Մարզն ունի արշավների կազմակերպման մեծ հնարավորություններ: Արշավներ կարելի է կազմակերպել դեպի «Թռչկան» ջրվեժ, որը հյուսիսային Հայաստանի բնության ամենագեղեցիկ հրաշալիքներից մեկն է, Արփի լճի ուղղությամբ՝ արշավներ դեպի Ախուրյանի կիրճի Զրաձոր-Անի քարանձավներն ու քարանձավային այլ բնակավայրերը: Մարզում զբոսաշրջության զարգացման համար հարկավոր է իրագեկել զբոսաշրջիկներին, կազմել տուր-փաթեթներ և գովազդի համար օգտագործել տարբեր գործիքներ՝ բջջային հավելվածներ, սոցիալական կայքեր, բուկլետներ և այլն:

Հաշվի առնելով տարեցտարի ՀՀ ճանապարհորդություններ իրականացնող զբոսաշրջիկների թվի աճը՝ առաջնահերթ է դառնում ենթակառուցվածքների

բարելավումն ու վերականգնումը, սպասարկման բարձր մակարդակ ապահովելու նպատակով տեխնոլոգիական նորարարությունների կիրառումը: Տրանսպորտային ուղիների հասանելիության բարձրացման համար՝ կարևոր է զբոսաշրջային վայրերում օտար լեզուներով ուղեցույցների առկայությունը:

Վերը նշված խոչընդոտները հաղթահարելու և ՀՀ-ում զբոսաշրջության համամասնական զարգացում ապահովելու համար կարևոր է պետական քաղաքականությունը, որը պետք է ուղղված լինի՝

- Միջազգային հարթակներում Հայաստանը որպես գրավիչ զբոսաշրջային դեստինացիայի ներկայացմանը: Հայաստան ժամանող միջազգային այցելուների միջոցով՝ երկրի և զբոսաշրջության ոլորտի մասին ստեղծված դրական նկարագիրը նպաստում է օտարերկրյա ներդրումների խթանմանը, որն իր դրական ազդեցությունն է թողնում տնտեսության մյուս ճյուղերի վրա (արդյունաբերություն, քաղաքաշինություն, կրթություն):

- Ավանդական ուղղություններից (պատմամշակութային, առողջարանային) բացի, խթանել զբոսաշրջության նոր ուղղությունների ձևավորմանը (էկոտուրիզմ, ագրոտուրիզմ, էքստրիմ զբոսաշրջություն, գործարար այցելություններ), որոնք Հայաստանը և՛ զբոսաշրջային, և՛ ներդրումային տեսանկյունից կվերածեն ավելի գրավիչ երկրի:

- Տրանսպորտային համակարգի և մուտքի-ելքի մատչելիության ապահովում: Մասնավորապես՝ անհրաժեշտ է ընդլայնել օդային ճանապարհային ցանցը, պայմանագրեր կնքել ոլորտում հայտնի ավիաընկերությունների հետ:

- Զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, զբոսավարների, ուղեկցորդների, տուր օպերատորների ու գործակալների լիցենզավորում, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովում:

- Մերտ համագործակցություն արվեստի և մշակույթի կազմակերպությունների հետ, քանի որ անհրաժեշտ է նրանց օգնել՝ պահպանել և ընդլայնել արվեստի, երաժշտության, արհեստագործության, խոհանոցի նմուշները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] ՀՀ «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ» 13.02.2008, URL: <http://mineconomy.am/media/2017/03/1454.pdf> (Հղումը կատարվել է՝ 02.05.2019):
- [2] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, Երևան 2003, URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64659> (Հղումը կատարվել է՝ 02.05.2019):
- [3] «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք, Երևան 2006, URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=29624> (Հղումը կատարվել է՝ 05.04.2019):
- [4] ՀՀ օրենք «Բնապահպանական վերահսկողության մասին», Երևան 1998, URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73116> (Հղումը կատարվել է՝ 05.04.2019):
- [5] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, Երևան 1998, հասանելի է՝ URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=38019> (Հղումը կատարվել է՝ 22.04.2019):
- [5] Շ. Հարությունյան, «Զբոսաշրջային ինդուստրիա և աշխարհագրություն», Երևան, 2004, էջ 130:

Օֆելյա Գալստյան

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ զբոսաշրջային ռեսուրս, կայուն զարգացում, զբոսաշրջային ներուժ, կառավարում, պետական քաղաքականություն:

Աշխատանքում ներկայացված է Հայաստանի զբոսաշրջության արդի վիճակը, ուղենշված է անհրաժեշտ քայլերը՝ ոլորտի հետագա զարգացման համար:

Աշխատանքի նպատակն է վերլուծել Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսների արդի վիճակը և պետական քաղաքականության դերն ու գործառնությունները՝ ուղղված զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացմանը: Արդյունքում պարզվեց, որ ՀՀ-ում առկա զբոսաշրջային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու պետության կողմից իրականացվող մարքեթինգային քաղաքականությունն՝ ուղղված Հայաստանի գրավիչ զբոսաշրջային դեստինացիայի ներկայացմանը, նպաստում են երկրի ճանաչելության բարձրացմանը, միջազգային զբոսաշրջային շուկայում ամուր դիրքերի գրավմանն ու կայուն զբոսաշրջային հոսքերի ապահովմանը:

Галстян Офелия

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ

Ключевые слова: туристический ресурс, устойчивое развитие, потенциал, управление, государственная цивилизация.

В данной работе представлено нынешнее состояние туризма в Армении, а также указаны необходимые шаги для последующего развития данной области. Цель работы - проанализировать современное состояние туристических ресурсов в Армении и роль государственной политики в дальнейшем развитии этой сферы. В результате приходим к выводу, что в РА рациональное использование нынешних туристических ресурсов и осуществление государством политики маркетинга, направленной на привлечение туризма в Армению, влияют на более глубокое знакомство со страной и помогают занять твердые позиции на международном рынке туризма и обеспечить стабильные туристские потоки.

Galstyan Ofelya

PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF TOURISM IN ARMENIA

Key words: tourism resource, sustainable development, potential, management, political civilization.

In the article, we have represented the current state of tourism in Armenia, as well as the necessary measures to develop the sector. The purpose of the work is to analyse the current state of tourism resources in Armenia and the role of government policy in the further development of the tourism industry. As a result, we have concluded that the rational use of existing tourism resources and the marketing policy of the government aimed at presenting Armenia as an attractive tourism destination, can contribute to raising awareness of the country, securing a strong position in the international tourism market, as well as to providing tourism sustainable flows.